Հաստատում եմ
Նաիրի համայնքի ղեկավար
_____ Ն. Սարգսյան
<<20>> օգոստոս 2025թ.

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
## <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/7>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի կարիքների համար Պռոշյան բնակավայրի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 5-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/7>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով երկու հայտ՝

| Հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | էլեկտրոնային փոստի հասցեն | Տ/Փ-ի ստացականի հ/հ |
| 1 | <<Լիլիթ-87>> ՍՊԸ | Lilit_95@rambler.ru հեռ. 093-50-08-01 | 000264653 |
| 2 | <<ԱԶՈԽ 1>> ՍՊԸ | Azokh.ltd@mail.ru հեռ.041-17-11-97 | 000264651 |

6. Հայտով ներկայացված գները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| Չափաբաժին 1 | | | | |
| 1 | <<Լիլիթ-87>> ՍՊԸ | 92 000 000 | 18 400 000 | 110 400 000 |
| 2 | <<ԱԶՈԽ 1>> ՍՊԸ | 116 500 000 | 23 300 000 | 139 800 000 |

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<Լիլիթ-87>> ՍՊԸ –ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/7>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2025 թվականի օգոստոսի 19-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<Լիլիթ-87>> ՍՊԸ -ի, որը գտնվում է գ. Պռոշյան 1-ին փողոց 127 հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/7>>:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 110 400 000 (մեկ հարյուր տասը միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

*(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)*